

Յայտարարութիւնների համար վճարում են  
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

Բայց ի հարկէ դրա համար հարկաւոր են լա-  
զերասաններ....

Նթէ ոչ, թիչ օգուտ կայ «լոյրլը» պէս զրուած-  
ների նեղակայացնելուց, որտեղ միտքը ամենահա-  
տարակ է հնացած է, իսկ ձևը, որի վէջը զրուած-  
քը ամփոփված է, [ստանդարտիզ], խնամված է ան-  
հռուսի է է պիտեսի դիրքը, ամբողջ նրա ըն-  
թացքը ամենամեծ աշխարհագրութիւններով լի է...  
ինձ կասեն, ճշու՛ր [ստոււ] է-ք ամբողջ ժամա-  
նակ նոյն իսկ պիտեսի վրա, բայց ոչինչ չէ-ք ա-  
սում գերասանների խաղի վրա» Գորան ես կը  
պատասխանեմ որ ինչքան էլ երևելի լինէին դե-  
պատանները այս տեսակ սոցիալական տեսչակա-

մտքով: Հայի արհեստանոցը նորա-  
տունն է, ուր գարեբով մտել է  
արդիւնաբերական ոգին և ար-  
հեստը և հասել բաւական մեծ  
տեխնիկական զարգացման: Ինչ-  
պէս ապացոյց կարելի է ցոյց  
տալ տաճկաց Հայաստանը, ուր  
շրջում են եւրոպական բոլոր գոր-  
ծուածներ, միայն դուրս եկած ոչ  
գործարաններից, այլ հայուհու  
ձեռքից. հայուհին եւրոպական մի  
նշմար գտնելով իսկոյն յարմարեց-  
րել է և արդիւնահասնել նոյնա-  
նմանը իր տնական առ ձեռն մե-  
քենաների վրա և այդպիսով մեծ  
կոնկուրէնցիա գրել Եւրոպայից  
եկող ապրանքի դէմ: Երբ այդ-  
պիսի մի ձիրք մտել է և զարգա-  
ցել հայուհու մէջ գարեբի ջան-  
քով, ուրեմն ինչո՞ւ չը պահպանել  
և չը խրախուսել այդ ընդունա-  
կութիւնը, որը գուցէ չունեն ու-  
րիշ ազգերը, թէկուզ հայերից էլ  
շատ զարգացած....

Մինչդեռ այժմեան պրօգրամ-  
ման, որ ունեն մեր օրիորդական  
ուսումնարանները խրախուսում են  
արդեօք այդ ուղղութեանը, միթէ  
այն աննշան ասեղնագործութիւնը  
որը ֆօրմի համար մոցրած են  
մեր օրիորդաց մէջ, փոխարինում  
են այդ խրախուսանքը. միթէ  
Եգուպտի, Ղարաբաղի, Գանձա-  
կի, Նուխու, Օհնգազուրի, Ե-

լէքսանդրապոլի, Ախալքալաքի օ-  
րիորդական ուսումնարանների մէջ  
չորս տարի չարչարվելով հայ աղ-  
ջիկը կարողանում է նորա կէսը  
սովորել ինչ սովորում էր առաջ  
իր մօրից մի տարվայ ընթաց-  
քում: Այժմ այդ մայրը էլ չէ  
կարող իր աղջկայ հետ արհեստով  
պարապել, որովհետեւ ուսումնա-  
րանի մէջ նա շատ մեծ և հար-  
կաւոր բաներ է սովորում. նա  
ուսումնասիրում է կապիկների  
կեանքը, գիշերուայ մկների կենցա-  
ղավարութիւնը և անգլիական  
յեղափոխութիւնը....

Մինչդեռ չորս տարվայ ըն-  
թացքում, ոտը բռնիկ հայ աղ-  
ջիկը, որի վրա է ի հարկէ գլխա-  
ւորապէս մեր խօսքը, աւանդա-  
կան կերպով պարտաւոր է ոչ  
միայն մետաքսից վերմակներ գոր-  
ծել, գորգեր, կարպետներ շինել,  
իր վրայի շորերը պատրաստել  
բուրդից և մետաքսից, այլ նա  
պարտաւոր է իր բոլոր բաժինը  
իր ձեռքով գործել ու հիւսել.  
նուիրելով նորա մի մասը իրան  
ծնողաց, ինչպէս երախտագէտ և  
հաւատարիմ որդու նուիրական  
պարտքը:

Եյսպէս է եկել և անցել հա-  
յուհու կեանքը, այսպէս է պահ-  
պանվել հայ ընտանեաց նիւթա-  
կան լիութիւնը, բարօրութիւնը,

անհատական պաշարը: Մինչդեռ  
հայ աղջկայ օժիտը այժմ պիտի  
փոխարինէ նորա հօր վերջի կօ-  
պէկը և իր սեփական ունեցածը.  
և այդ ունեցածը կայանում է  
տանտիրական կոտորակների, ընդ-  
հանուր պատմութեան և աշխար-  
հագրութեան բեկորների վրա....

Ահա այս է պատճառը որ  
մենք յարուցանում ենք այն հարցը  
որ յարուցվեց արդէն մի քանի  
ամիս առաջ «Մշակի» մէջ, բայց  
մնաց առանց հետեանքի: Մենք  
կարծում ենք որ այսպիսի մի կա-  
րեւոր հարց, ինչպէս մեր օրիոր-  
դական ուսումնարանների դրու-  
թիւնն է, չէ կարող առանց հե-  
տեանքի մնալ, որովհետեւ այդպի-  
սի անուշադրութեան հետեանք-  
ները քիչ ժամանակից յետ սպառ-  
նալի կարող են լինել....

Վասն որոյ առաջարկում ենք  
բոլոր սրտին մօտիկ աւանդներին,  
օրիորդական ուսումնարանների պը-  
րօգրամայի ինդիքը շինել օրվայ  
հարց և ընդհանուր ջանքով վրձ-  
ուել այդ ինդիքը հայոց պահանջ-  
ներին, հայոց ուղղութեան, հայոց  
յատկութիւններին համեմատ, այլ  
ոչ թէ կուրօքէն Եւրոպայից առ-  
նելով: Այդ ժամանակ միայն  
մեր նորամոլութիւնը կունենայ  
խելացի և գիտակցական բնաւո-  
րութիւն. այդ ժամանակ միայն

աշխատանքի բաժանութիւնը, ըս-  
տանալով կանոնաւոր ձև, կարող  
է խոստանալ մեզ հաստատ ա-  
պագայ....

Գր. Նիկողոսեան

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿԱՆ ՎԵՐՔԵՐԻՑ ՄԵԿԸ

Մի ժողովրդի, մի հասարակութեան գոր-  
դացումը այն ժամանակէ կանոնաւոր և հաս-  
տատ, երբ նրա բոլոր ուժերը դուրսնալ  
զարգանում են միասնական ձգտումների և գա-  
ղափարների դրօշակի տակ, իսկ երբ նրա ու-  
ժերը դանդաղ են անհասարակութեան  
խաօսի մէջ, այն ժամանակ այս հասարակու-  
թեան մէջ անպակաս են դանդաղան անբնա-  
կան քայքայող երեղթներ: Հայ հասարակու-  
թիւնը համարեա մօտ է այսպիսի դրութեան  
իր արական և իգական սեռերի անհասար-  
կըթութեամբ, թէպէտ և բոլոր աղբերի մէջ  
տիրում է այս անհասարակութիւնը, բայց նա  
այնքան զգալի է մեծ չէ, ինչքան մեզանում:  
—Ուսման ծարաւ ունենալով հայ երիտասարդու-  
թիւնը թողնում է և հայրենիքից հեռա-  
նում է դէպի գիտական կենտրոնները, որտեղ  
նա ձաշակում է գիտութեան պտուղները,  
որտեղ նա ծանօթանում է աւելի բարձր պը-  
րիցիպների հետ, նրա զգայուն սիրտը յա-  
փշտակվում է փետ գաղափարներով, նրա մէջ  
զարթնում են աւելի ազնիւ գաղափարներ,  
քան այն, որով շողողված է նրան ստեղծող  
հասարակութիւնը. երիտասարդութեան աւելի  
տկար, աւելի փղբողի անդամները զարհուրելով  
ապագայում նրանց սպասող կեանքի պատկերով,  
և կուրօքած անձնական բարօրութեան զգաց-  
մունքով, ընկնում են օտար հասարակութեան

անկարելի է դատել դերասանի խաղալու շնորհի  
վրա: Բայց ուրիշ կողմից եւ հաւատացած եմ որ  
ոչ մի օրինաւոր դերասան երբէք չի համաձայնի  
խաղալ զկոյրիս պէս մի արուեստական գրուածքի  
մէջ, Թող պ. Աղաւազան փորձի մի անգամ խա-  
ղալ ոչ թէ միայն մի այնպիսի հանրածանօթ  
պիեսայի մէջ, որի տիպերը անմահ են և որի ձեռք  
անյանդմանելի է, բայց մինչև անգամ փորձի  
մեր տեղական գրողի, Ստեփանիանցի «Ելի մէկ  
գուն գրուածքի թէև թույլ, բայց իրական և կեն-  
դանի Մկրտչի զերեք ներկայացնել, — և այն ժա-  
նանակ եւ կասած նա լաւ դերասան է, թէ ոչ:  
Բայց քանի որ նա իր խաղայ արուեստական, օղա-  
յին, անբնական, կրակաւորութիւնից զուրկ, անյարմա-  
րութիւններով լի պիեսներում, ինձ անհարկն կը  
լինի գնահատել, կամ քննադատել նրա և մեր  
մշտական խմբի բոլոր դերասանների խաղը:

Եւ վերա յիշեցի արդէն պիեսայի բոլոր անյար-  
մարութիւնները, անկապ ընթացքը, անբնական  
դիւրեւրը, ինձ մնում է միայն աւելացնել և հետե-  
ւեալը: Արեւմտ կուրսում է յայտնի չէ թէ ինչ-  
պէս և ինչ պատճառով: Եթէ նա կատարակտ  
ասված կուրսութեան ցուով է կուրացել, այսինքն  
եթէ նրա աչքերը ծածկվել են բարակ սպիտակ  
փառով, — այն ժամանակ այդ ցաւը յանկարծակի  
չէ յայտնվում: Եթէ յանկարծակի է կուրացել, —  
այդ ոչ մի բժշկական օպերացիայով բժշկել չէ  
կարելի: Իսկ Արեւմտ ութ տարի կոյր լինելուց  
յետոյ, բժշկվում է Դարսի բժշկի ձեռքով մի  
բօլէում և դուրս է վազում միւս սենեակից դեռ  
երեսբայի վզին, աղաղակելով «Ես տեսնում եմ...»  
Կարծես թէ այդ տեսակ ծանր ցաւի բժշկելը նոյն  
է ինչ որ մի մարդու միտքը անհարկ... Կատա-  
րակտի աղող օպերացիայից յետոյ հիւանդը, ինչպէս  
յայտնի է, ամիսներով պէտք է նստի մութ սե-  
նեակում, մինչև որ կատարելապէս առողջա-  
նայ...

Եւ ահա այդ տեսակ անբնականութիւններով լի  
է պիեսան... Հասարակութիւնը կատաղի կերպով  
ձախաճարում է, որովհետեւ է ֆէկտաներ շատ  
կան, թէ՛ պիեսայի ամբողջ ընթացքը վերին առ-  
թիւնին անմիտ է: Հասարակութիւնը ծափահա-  
ղեց է, երբ ամբողջ, սեղանը և նրա վրա դրած  
շամաղանը ընկնում են, երբ կուզ ունեցող բժիշկ

Դարսին իր կուզի վրա հանաքներ է անում, երբ  
կոյրը առողջանում է, երբ Լուիզա և Ստեփաննա  
սպառնալիքներով ձանապարհ են գցում Արմանին  
և այլն... Եթէ կու, միշտ է ֆէկտ, առանց բովան-  
դակութեան...

Այդ տեսակ պիեսայից ինչ է դուրս բերում  
հասարակութիւնը... Միայն այդքան. «Ինչ լաւ էր  
այն կուզիանը, կամ ինչ լաւ էր ներկայացնում  
Աղաւազանը կոյրին, զարմանալի է ինչպէս նա եր-  
կու գործողութիւնը շարունակ իր աչքերը շուռ  
էր տալիս, այնպէս որ միայն սպիտակ էր երե-  
ւում աչքերի մէջ...» և այլն:

Բայց մի իրական օգուտ, մի օրական ինդիք  
յարուցանելով, — դա մեր կօմիտէտի կարծիքով բեմի  
գործը չէ:

Այն ինչ թատրոնը միայն այն ժամանակ կարող  
է կրթողական ներգործութիւն ունենալ ժողովրդի  
վրա, երբ նա ձեռք ձեռքի տուած ընթանում է  
զպրօքի, լրագրութեան, հասարակական կարծիքի  
հետ միասին, երբ նա յարուցանում է օրական  
ինդիքներ, միւս է, դրուում է հասարակութիւնը  
դէպի առաջադիմութիւն, զարթոնքներով նրա մէջ  
իր հասարակական երեղթների ինքնաշնոր-  
թիւնը:

Թատրոնը նոյնը պէտք է անի, ինչ որ անում է  
ամենօրեայ լրագրի առաջնորդող յօդուածը. նա  
պէտք է զարթոնքի օրվայ հարցեր: Նոյնը անում  
է և ժամանակակից բօմանը: Նա կամ զրուարում է  
նոր մտքեր, կամ մտաւորում է փնտաւար երեղթ-  
ները: Վերցնենք Տուրգենիւնի: Երբ որ Ռուսաս-  
տանում յարուցվեցաւ ճորտերի աղաատութեան  
ինդիքը, Տուրգենիւնի գրեց «ЗАНЕСКИ ОХОТНИКА»  
երբ որ յայտնվեցան Ռուսաստանում նոր ձեռի,  
մարդիկ, այսինքն խօսքի բայց ոչ թէ գործի մար-  
դիկ, ռուս երեկի հեղինակը ստեղծեց իր «РУДНИК»  
տիպը, կրթ. նիւթիտաների տիպեր յայտնվեցան  
ռուս հասարակութեան մէջ, Տուրգենիւնի գրեց  
«ОТЦЫ И ДЕТЯ» բօմանը, որի մէջ մտաւորաց այդ  
տեսակ երիտասարդութիւնը բազմաթիւ տիպը  
ներկայացնելով, վերջապէս Նեշայեվի պէս ժողո-  
ւրդական անաղող և թերուս պրօպագանդիստների  
Ռուսաստանում շատանալուն պէս, Տուրգենիւնի  
գրեց «НОВЫ» բօմանը, որի մէջ ներգանգով տիպի  
մէջ մտաւորաց այդ ուղղութեան մարդիկներին:

Նոյնը անում է և թատրոնը: Երբ ճորտերի  
աղաատութիւնից յետոյ հաստատվեցան նոր յարա-  
բերութիւններ աղաատութեան ճորտերի և նրանց կա-  
լուածաժողովրդի մէջ, Պոտեխին գրեց «ОТРЕЗАННЫМ  
ЛЮДЯМ» պիեսան: Երբ լրագրութեան և հասարա-  
կական կարծիքի մէջ յարուցվեցաւ հրէաների  
հարցը, այդ հարցի մասին շարունակվում էր պօլե-  
միկը, և օրէնսդրութեան մէջ պատրաստվում էին  
հրէաներին միւս քաղաքացիների հետ քիչ թէ շատ  
հաւասարեցնող նոր օրէնքներ, — Կալչենկո  
ռուս թատերագրող գրեց «СОВРЕМЕННАЯ БАРИШ-  
КА» պիեսան, որի մէջ օրիորդ տիրում է հրէայ  
ուսանողին, առանց իմանալու թէ նա հրէայ է,  
բայց երբ իմանում է, դարեւով արմատացած նա-  
խապաշարմունքը բօլշակական կերպով յաղթում է  
սիրոյ զգացմունքը....

Ահա ինչ է նշանակում օրական հարցեր յարու-  
ցանք բեմի վրա: Երեկայեցեք ձեռք որ օրէնքը  
դրութիւնը պատրաստում է մի նոր օրէնք ան-  
հարազատ երկխոսների վերաբերութեամբ, կամ ա-  
պահարզանի մասին մի նոր օրէնք, կամ դաւա-  
նութիւնների աղաատութեան օրէնքը, — և ահա բե-  
մը ներկայացնում է նոյն ինդիքների քննութիւնը  
գեղարուեստական ձևի մէջ և այդպիսով պատ-  
րաստվում է հասարակական կարծիքը նոր օրէնք-  
ների իրագործելուն և հասարակութեան մէջ զը-  
րանց տարբերութիւն....

Եւ դուք կարծում էք որ նոյն տեսակ օրական  
ինդիքներ չը կան և մեր հասարակութեան մէջ...  
Ընտանիքի բռնաւորութիւնը, մեր օրիորդներից  
ստացած դարձակ ուսումը, որով նրանք չեն կա-  
հարազատ երկխոսների անօգնական դրութիւնը, մեր  
ամուսնական շահաւէր յարաբերութիւնները, սե-  
փական աշխատանքով ապրելու ինդիքները, մեր  
բարձր ուսում ստացածների հասարակական մակե-  
րկութի տակ ընկնելը և նրանց անտարբերութիւնը  
դէպի ամեն առաջադիմութիւն... և այլն, ինչքան  
ուզում էք....

Ստեղծելուց սկսել էր այդ ուղղութեամբ  
գրել, բայց դժբաղդաբար կէս ձանապարհի վրա  
կանգնեց և չը շարունակեց:

Բայց նիւթ ինչպէս չենք կարող հեղինա-  
կել և պէտք է բաւականանանք միմիայն թարգ-

մանական թատրոնական պիեսներով, գտնէ թար-  
գմանքը օտար գրականութիւններից այնպիսի  
պիեսներ, որոնց առաջնորդող գաղափարը յար-  
մար է դալիս մեր կենսական օրական ինդիքնե-  
րին, բայց ոչ թէ «Եկոյր», «Եկարչի դուստր»,  
«Սէր առանց համարման» և ուրիշ նրանց նման  
անմիտ պիեսներ....

Վերջ մի քանի խօսք ուղղում եմ դէպի կօմի-  
տէքը և նրա ընթիւնները: Դերասանները երբէք  
օրինաւոր կերպով իրանց դերերը չը գիտեն: Տիւ-  
բերիէ, երբ մոռացել է ինչ պէտք է ասի, կըրկ-  
նում է անտեղի կերպով արդէն ասված ֆրազեր,  
Ժընըվիէվը (կոյրը) ամենաողբերական բօլշակում  
(հինգերորդ գործողութեան մէջ) դուրս է գալիս  
մի հինգ բօլշակով սենեակից, յայտնի չէ թէ ինչ  
հարկաւորութեան համար և յետոյ նորից մտնում  
է բեմը: Բէմի ծառան միշտ մտնում է երբ  
որ նրան չեն կանչում և երբ որ արդէն  
կանչան է դրան մօտ, այն ժամանակ պարոնը  
զանգակ է տալիս: Երբ Արեւմտը Բէմին ուղար-  
կում է մէկին նամակ տանելու, ծառան ասում է  
«Իսկոյն գնում եմ», բայց դարձեալ մտնում է և Ար-  
բերտը չէ ասում նրան «Ինչի չէս գնում...» Այդ այն  
պատճառով է, որ Բէմին գիտէ թէ Արեւմտը մի  
մնօրօք պէտք է ասի և այդ մօնօրօքից յետոյ  
ինքն էլ մի մօնօրօք ունի ասելու....

Վերջապէս հինգերորդ գործողութեան մէջ Ար-  
բերտը ոչ թէ միայն կոյր է, բայց և խուլ է, ո-  
րովհետեւ երբ նա խօսում է Ժընըվիէվի հետ, ա-  
ռանց իմանալու թէ Տիւբերիէ ներկայ է, այդ  
վերջինը այնքան բարձր է բողաւում, որ Արեւմտը  
անպատճառ խուլ պէտք է լինի նրա ձայնը չը լը-  
սելու համար: Բայց նա լսում է իր հօր ձայնը  
միայն այն ժամանակ երբ պիեսայի մտքով հար-  
կաւոր է որ լըն....

Վերջացնում եմ խօսքս կրկին դիմելով կօմի-  
տէքին և ասելով. ցաւալի է երբ մտաւորապէս ան-  
պատրաստ մարդիկ յանձն են առնում ժողովուրդը  
առաջնորդելու:

գիրքը և սեփական ունեցնութեան փոշի մէջ թաւալում. իսկ աւելի փտաճները վերադառնալով դէպի Հայրենիքը խորհրդում են շրջապատող կեանքի մեղմանը ալիքների տակ, նրանք մոռանում են իրանց բարձր իղէպները, բարոյական պրինցիպները, որոնց համար նրանք այնքան զոռում, զոչում էին ուսանող ժամանակը: Թէ առաջին և թէ երկրորդ երևոյթը շատ փաստակար է հայ ազգի պէս նոր դարձող ժողովուրդի համար. մեր նոր ուժերը այնքան քիչ են, որ նրանց մի քանիսի կորուստը մեզ համար պէտք է զգալի լինի, բայց դեռ կորստեան մասին հետ կարելի է հաշտվել, աւելի փտաճ կեանքներ ունի մեզ համար այն հանգամանքը, երբ մեր բարոյական և մտաւորական զարգացած ուժերը խեղդում են մեր մեղմանող կեանքի ալիքների տակ. այս նոր ուժերը փոխանակ նոր զաղափարների, ալիքի զգացմունքների առաքելալներ դառնալու, իրանք են մոռնում բարոյական, փոխանակ հին կեանքը նոր զաղափարներ կրակով վերամշակելու, իրանք են ընկնում հուսկեան հնոցի մէջ... կրկնում են որ այս երևոյթը աւելի կորստական, աւելի փաստակար է:

Այս փաստակար երևոյթների պատճառները շատ են, բայց ես այս յօդուածովս ուշք եմ դարձնում նրանցից մէկի վրա, որը իմ կարծիքով ամենամեծ նշանակութիւն ունի այս հարցում. իմ խօսքս մեր իրական սեռի անհամաձայն տակար է չնչին զարգացման մասին է, երբ արական սեռը ստանում է բարձր կրթութիւն, իրականը—այն էլ նրա փոքրամասնութիւնը հասնում է տարրական կրթութեան աստիճանին. երբ արական սեռի մտաւորական և հոգեկան աշխարհը լայնանում է, իրական սեռը դեռ պտտում է նահապետական կեանքի խաւարի մէջ, հասկանալի է որ բարձր զարգացած երիտասարդը չէ կարող գտնել այս շրջանում իր կեանքի ճշմարիտ բարեկամին, այն բարեկամին և ընկերին, որը պիտի ապրէ նրա հետ մի կեանքով այս բառի ամենալայն նշանակութեամբ, որը պիտի հասկանայ նրա ձգտումները և օգնէ նրան իր մտաւորական և հոգեկան ուժերով. նա չէ կարող գտնել այն կնոջը, որը կաթիլ հետ միասին պիտի ծծեցնի իր գաւակին հասարակական զգացմունքները և զաղափարները, որը բացի իր պաշտօնական ծանօթ լինի ուրիշ կենդանացող և ազնուացող խնդիրների հետ:

Նոր միջերի և զաղափարների ամենաուսանողուն համակողմը եղել է կինը, նա միշտ եղել է բարի մտքերի ջերմուսնոր տարածողը, ընդհանրացողը, բաւական է որ յիշենք, թէ ինչպէս կինը օգնեց քրիստոնէութեան տարածվելուն, մեր աղքատիկ պատմութիւնը պարզեց մեզ Սանդուխտի և Խորովանուշի պէս հերոսուհիներ, որոնց հովանաւորութեան տակ քրիստոնէութիւնը մուտ գործեց Հայաստան. մեզ պէս փոքրածիւ ազգի համար մեծ յանցանք է մոռնալ կնոջ բարձր հասարակական կոչումը, մեր կեանքի ամենագլխաւոր հարցերից մէկը պէտք է լինի կնոջ մտաւորական կրթութիւնը, նրա բարոյական վերակենդանութիւնը և նրա կատարեալ ազատութիւնը բնաւորական լծից: Հայ երիտասարդի ետեւից պէտք է հետեւէ և հայ օրիորդը դէպի մտաւորական կենտրոններ, որտեղ այսերկու ուժերը միասին զարգանալով և զբաղաւորված միասնական զաղափարներով և ձրգաւաններով պէտք է բացեն նոր կեանքի ասպարէզը:

Իր անցեալ տարի «Մշակի» թերթերում առաջարկեց կազմել «կեանքի ընկերութիւն», նրա նպատակներից մէկն էլ հայ կնոջ բարձր կրթութիւնն էր. մեր հասարակութիւնը անտարբեր մնաց այն առաջարկութեան. նա կարծես ամեն մի գործում զուրկ է ինչիցատիկից, նա պատրաստ է կատարել փաստին երկրպագելու, բայց ինքը անընդունակ է ըս-

տեղծելու նրան: Կ. Պոլսում կազմված «Պարզասէր հայուհեաց ընկերութիւնը» աւելի մեծ հետաքրքրութիւն և համակրութիւն շարժեց թէ մամուլը և թէ հասարակութեան կողմից, քան առաջարկող ընկերութիւնը, չը նայելով որ «Պարզասէր» ընկերութեան նպատակն է աւելի հարուստ հայ կնոջ ազատել մի քանի շտալ պաշտօնականներից, միևնույն կեանքի ընկերութեան նպատակն էր հայ կնոջ բարոյական վերակենդանութիւնը, նրա մտաւորական զարգացումը, նրա մարդկային իրաւունքների վերականգնումը և նրա կատարեալ ազատութիւնը: Հասարակական անտարբերութեան դառն բաժակը նոր սերունդը ստիպված է խմելու. նա իր ուսերի վրա պէտք է տանի նրա բոլոր ծանրութիւնը, ուրեմն նոր սերունդը պէտք է մտածէ վերոյիշեալ հարցի մասին, հայ ուսանողութիւնը առաջինը պէտք է ձայն բարձրացնի այս սրբազան գործի համար: Մեր նախորդները երգէր յօրինեցին, զովեցին հայ աղջկայ Ֆիդիկական գեղեցկութիւնները, իսկ մենք պարտաւոր ենք նպատակու. նրա միտաւորական և հոգեկան գեղեցկութեան: Նա փտաճանում են յայտնել Մոսկվայի հայ ուսանողութեան կողմից, որ նա բոլոր սրտով պատրաստ է օգնելու թէ ներթապէս և թէ բարոյական ամեն մի հայ կնոջ, որը կը փափագէ բարձր կրթութեան: Նա համոզված են որ Մոսկվայի հայ ուսանողութիւնը ընդունակ է մի այսպիսի գործ կատարելու, որովհետեւ նա արդէն յոյց է տուել թէ որպիսի համակրութեամբ կարողանում է օգնել հայ աղքատ երիտասարդին. այսպէս նա պիտի առաջին բայը անէ այն մեծ շարժման, որը կրում է իր վրա «հայ կնոջ մտաւորական և բարոյական վերակենդանութեան» անունը, որից կախված է ամբողջ հասարակութեան կանոնադրող զարգացումը և նրա երջանկութիւնը:

Մ. Աբեղեանց

Մոսկվա.

ՆԱՄԱԿ ԽՄԱԳԻՐԻՆ

Սեան, 15 յունվարի

Ահա ընդ ամեն ուղարկում եմ 23 բուրբ, խոնարհաբար խնդրելով հասցնէք «Արարատեան» ընկերութեան ձեռագիր ի քաղաք Վան ի Լիւբ գիւղը ի ձեռն Յունան Թակըր Վարդապետեանին ստանալ պատասխան և շուտով ուղարկել ինձ: Իմ հասցէս է՝ Թակըր վարդապետ միաբան Սեանայ, ի գիւղն ելենովկա ի Սեան:

Թակըր Վ. Մկրտչեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շաբաթ, յունվարի 26-ին Գողթրուա եղբայրների ֆրանսիական ցիրկում լինելու է թիֆլիսի հասարակութեան սիրելի պար եկող արտիստ Գրա-ցիօլի բենեֆիկը: Այդ ներկայացման ժամանակ շատ նորութիւններ են լինելու, իսկ կիրակի, յունվարի 27-ին մի նոր պատմական ֆանտաստիական նշանաւոր է ներկայացվելու, որի վերջը գիրն է «Պրերտ» և իր բարեկամ բերտարածը: Այդ նշանաւորի համար նոր գեկորացիաներ և զգեստներ են պատուիրել Գողթրուա եղբայրները: Շաբաթ և կիրակի օրվայ ներկայացումների համար պահված են 1 էտն և 1 լիւր վերսիպեդիստէկվիլերիստ արտիստները, որոնք շուտով գնալու են թիֆլիսից: Տեղերի գները սովորական են, ներկայացման սկիզբը 7½ ժամին:

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են. «Երբ հողաբարձուները շատ աշխատեցին, որ հները 500 ր. աւելի պարտքի համար վկայական տան, բայց այս վերջինները չը համաձայնեցին: Նոր հողաբարձուները ճարահատված նրանցից հաշիւները առանու:

Վաղախի դաւառի մէջ գտնված ԿՈՂԲ գիւղից մեզ հաղորդում են, որ գիւղի ծխական քահանայ Աբգարիտ Տէր-Գարեթիւնեանի աշխատութեամբ մի ծխական դպրոց է բացվել:

Մեզ գրում են ՆՈՒԽՈՒՑ. «Բացի այն 15,000 բուրբուց, որ հաւաքվեցաւ մեր քաղաքում ցորենի գնելու և մի և նոյն գնով աղքատների վրա ծախելու համար, թիֆլիսից դարձաւ 5000 բուրբ ստացվեցաւ, որով թիֆլիսում և Բագուի մէջ պէտք է ցորեն առնվի և աղքատներին արվի 10 տարի ժամանակով:»

ՀԻՆԵՆԱԽԱՅԵԼԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ թատրոնային երիտասարդները չափազանց դժուարանում են պիեսայի ընտրութեան մասին, որովհետեւ նախընտանցել չեն սիրում որ մի գրուածքի մէջ սիրոյ մասին մի բառ անգամ լինի: Բեմի դուռն եկող կանայք աղէտ հասարակութիւնից արհամարհված են: Թիֆլիսից լսել է, որ հինգ տարի առաջ օր. Աւետիքեանը բեմ է դուրս եկել և նրան հասարակութիւնը մինչև այժմ անպատուում է: Թատրոնասէրները առհասարակ նախընտանցեցին կարծիքով լիւր են:

Մեզ գրում են ԱՅԱՆԱՔԱՆԱՔԻՑ. Արտվինի բնակչներից մէկը վերադառնալով Արդահանից, երբ անցնում է Կարծալ գիւղի մօտ եղած նախկին պահականոցի (ПОСТ) առաջ, պատահում է մի նայի, որ խնդրում է արդվինցուն օգնել իրան պահականոցում մնացած իր հիւանդ ընկերին ձիու վրա նստեցնելու համար: Արտվինցի հայը ոչինչ չը կասկածելով, գնում է և կարծեցեալ հիւանդին արագ է խմցնում, հաց է ուտացնում նրան կարգուրելու համար: Կարծեցեալ հիւանդը արտվինցու օգնութեամբ վեր է կենում և յանկարծ բռնեցքի մի այնպիսի հարուած է տալիս արտվինցուն, որ նա ուշաթափված գետին է գլորվում: Չարագործները խեղճի ոտը ու ձեռքը կապում են, զրպանից հանում են նրա ունեցած փողը և իրանց փախչում են: Արտվինցի մի ամբողջ գիշեր մնում է կապած և վերջ ի վերջոյ նրան աղղղում է կապանքներից ազատվել և գալ Ախալքալար: Կողոպտվածի ձին, որի վրա չարագործները հեծել և փախել էին, գտան քաղաքի մօտակայ Վ. գիւղի մօտ: Այդ գործի մասին արդէն քննութիւն է սկսված:

Մեզ հաղորդում են ԱՅԱՆԱՔԱՆԱՔԻՑ, որ այդտեղ նուիրատուութիւններ են հաւաքվում ռուս բանաստեղծ Լերմոնովի արձանի համար, որ պէտք է դրվի Պիտաղորոսի վրա:

ԹԻՖԼԻՍԻ միջերանցում պաշարեղէնների գինը հետզհետեւ բարձրանում է: Մի ֆունտի գինը նշանակված է 12 Կ., բայց 15 Կ. հազիւ կարելի է օրինաւոր միս գտնել:

Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ գրում են, թէ դպրոցների հին նուիրատուութիւնների պարտաւորակները նորոգվեցան, որոնց ժամանակից 10 տարուց աւել անցել էր: Եւ մի քանի պարտիստներ նոր ներկրատուութիւններ արեցին, եղբայր Տէր-Միքէլեանը նուիրեցին 3200 բուրբ, որի տոկոսով մշտապէս 4 օրիցգիր և 2 օրիցգրուհի պիտի սովորեն Ագուլիսի դպրոցներում: Պ. Ս. Հախնազարեանը նուիրեց 600—բուրբ, որի տոկոսով մի օրիցգիր պիտի սովորի նոյն դպրոցներում յանուն իր հանգուցեալ հոր: Եղբայր Մ. և Ս. Աբեղեանները նուիրեցին նոյն մարդով 300 բուրբ:

Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ հաղորդում են, թէ ցորենի պուրը այստեղ ծախվում է 3 բուրբ 20 Կօպ. և շատ աղքատներ հաց չեն գտնում ուտելու: Հասարակութիւնից ընտրվեցան եօթն անձինք, որոնք յօդուտ աղքատների ստորագրութիւն բաց արեցին, որի դուռնը հասել է 1000-բուրբու: Այս գումարով ցորեն են առնում և էժան գնով, այսինքն պուրը 1—բ. 20 Կօպէլով ծախվում են աղքատներին: Ցանկալի կը լինէր, որ ուրիշ տեղերում աղուղեցիներից օրինակ առնէին:

Մեզ խնդրում են տպել հետեւեալը: «Այս 27-ին, կիրակի օրը, ժամը 11-ին առաւօտեան, ԹԻՖԼԻՍԻ Ս. Գայիանեան օրիորդական Ուսումնարանի դահլիճում պիտի կարդացվի ժամանակաւոր մասնագործի ձեռքով պատրաստված «Հայկեանց բարեկործանական ընկերութեան» կանոնադրութիւնը: Այս մասին մասնագործող պատիւ ունի յայտնելու Թիֆլիսի յարգելի հայուհեաց, խոնարհաբար խնդրելով պատուել յիշեալ նիստը իրանց ներկայութեամբ:»

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են: «Մեր հինգ համարանախաններից մինը պակասեցաւ, դա է մեր քաղաքին յայտնի փաստաբան Միքայէլ Տէր-Աւետիսեանց, որ երկարուտ բարակացաւ յետոյ,

վախճանվեցաւ յունվարի 7-ին: Գուցէ հարցնէք, թէ ինչ հասարակագուտ գործերով նշանաւոր եղաւ հանգուցեալը: Ցաւում եմ որ ձեր հարցին գոհացուցիլ պատասխան չեմ կարող տալ:»

Մեզ հաղորդում են ՆՈՒԽՈՒՑ որ այդտեղի նոր հողաբարձուներից երկուսը, պ. պ. Թ. Տէր-Խաչատրեանց և Մ. Արարատեանց յունվարից արդէն սկսեցին ձրիապէս դատաւորութիւն անել ուսումնարանում, մինչև որ դպրոցը կապահովվի ներթաւան աղբիւրներով:

Շնորհակալութեամբ տապալմը պ. բոխչ Գ. Տէր-Գրիգորեանցի «Վարակի հիւանդութիւններ» վերնագրով գիրքը: Այդ գրուածքը մաս մաս տպվում էր «Արարատ» ամսագրի մէջ, իսկ ներկայ 1880 թւին հրատարակվեցաւ առանձին գրքովով վաղարշապատում, Ս. Էջմիածնի տպարանում: Հեղինակը խօսում է իր գրուածքի մէջ ամեն տեսակ վարակիչ հիւանդութիւնների մասին՝ ծաղիկ, կարմուկ, սկարլետին, բժաւոր արիֆ, անդադարձ տենդ, զիֆտէրիա, ընդհատ տենդ, խոլէրա, դեղին տենդ, որովայնաթիֆ և ժանտախտ: Մեզ անհասկանալի է թէ ում համար և ինչ նպատակով են գրվում այդ տեսակ գրքեր: Եթէ պ. բոխչը գրել է այդ գիրքը իր հիմունքները ցոյց տալու համար,—այն ժամանակ մենք խօսք չունենք ասելու: Բայց եթէ գիրքը հեղինակած է որպէս ժողովրդական ձեռնարկ ամբողջի առաջնորդելու նպատակով վարակիչ հիւանդութիւնների դէմ նրան պահպանելու համար,—գրուածքը ամենակին իր նպատակին չէ հասնում: Գիրքը լի է ցիտատներով երեկի բժշկական հեղինակութիւններից, բայց ոչ հիւանդութեան նկարագիր կայ, որ ժողովուրդը նկարագրված հիւանդութիւնից օգուտ քաղի, երբ հանդիպում է իրականութեան մէջ նոյն հիւանդութեան նշաններին, ոչ էլ պահպանի և բժշկող միջոցներ են ցոյց տաւած գրքի մէջ: Հեղինակը շատ է խօսում հիգիենական և անեթիզադիական միջոցների վրա, բայց այնքան ընդհանրական ձևով որ գիրքը աւելի նման է մի ձեռնարկի պետութեան, նահանգի, կամ գաւառի վարչութեան ձեռքում ուղեցոյց լինելու, քան թէ մի ձեռնարկի ժողովրդի ձեռքում պիտանի լինելու համար: Միայն իր գիտութեամբ փայլելու համար չարժէ գրել հայերէն լեզուով այդ տեսակ գրքեր, իսկ հայ ժողովրդի համար դա ապարդիւն աշխատանք է, որի համար հարկաւոր են հասկանալի, ժողովրդական և գործնական խրատներ վարակիչ հիւանդութիւններին առաջն առնելու համար: Ուրեմն հայերէն լեզուով այդ տեսակ գիրք հրատարակելը բոլորովին ապարդիւն է, իսկ ռուսերէն լեզուով նա կը լինէր միայն մի թիւղ քաղուածք արդէն յայտնի գրուածքներից: Եւ «Արարատ» ամսագիրը երեակայում է իրան որ մեծ օգուտ է բերում ժողովրդին հրատարակելով այդ տեսակ գրուածքներ, որոնք բոլորովին անպէտք են ժողովրդի համար:

«ՄԵԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳՈՅԻՆ ԲՆԿԵՐՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ, 23 յունվարի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է հետեւեալը.

հրամայված է, որ 1880 թւին առաջին կէսում, Կիէվի, Վոլինիսի և Պոդոլիսի նահանգներում, դատաստանական ընդհանուր օրէնքներ մտցնելին: Նոյնպէս հրամայված է, որ Եսկովի, գաւառական ուսումնարանի փոխարէն, վեց դատաստաններով բնակական դպրոց բացվի: Կովկասեան զինուորական բժշկական մասնի տեսուչ Բէմլեարին շնորհված է Աննա առաջին աստիճանի ջրանշանը:

ԼՕՆԳՈՆ, 22 յունվարի (3 փետրվարի): Լօւրանով երէկ հասաւ այստեղ, և այսօր այցելեց ԲիկոնաՅիլդիին:

ԲԵՐԼԻՆ, 22 յունվարի (3 փետրվարի): Հաւատացնում են, որ Ֆրանսիական դեսպանը վաղը ուղևորվում է դէպի Ֆրանսիա:

ԼՕՆԳՈՆ, 24 յունվարի: Այսօր ժամը 2½-ին Վիկտորիա թագուհին բացեց պարլամենտը: Լորդ Կէրն կարդաց դահական ճառը, որ շատ խաղաղասիրական է:

Իմբադիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր Ի Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Վ Ա Ն Գ Ր Ա Ս Ե Ն Ե Ա Կ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՎԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

բոլոր եւրոպական լրագրիչների համար Մոսկվայում (Центральная контора объявлений для всѣхъ европейскихъ газетъ въ Москвѣ, Большая Дмитровка, д. Вучкова) ԸՆԴՈՒՆՈՒՄ է յայտարարութիւններ բՈՒՈՐ ուժու և արտասահմանեան ԼՐԱԳՐԻՉՆԵՐԻ համար խմբագրական ԳՆԵՐՈՎ, նշանաւոր ՁԻՋՈՒՄՆԵՐՈՎ:

Լ Ռուսաց ամենօրեայ, շաբաթական, պատկերազարդ և ծաղրական լրագրիչների ԳՆԴՈՒՆՈՐ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ: ԱՄԵՆՈՐԵԱՅ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ունի բոլոր ուժու և արտասահմանեան ազգութիւններ հետ: Յայտարարութիւններ ընդունվում են նոյնպէս բոլոր գաւառական լրագրիչների համար: Քարգանդութիւնները ՁՐԻ են լինում: Եւրոպանիայի յայտարարութեան համար ԱՊՏՈՒՑԱԿԱՆ յՈՒ է ուղարկվում:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՎԱՐՁ ԵՆ ԿԱԶՄՎՈՒՄ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ընդունվում է բոլոր լրագրիչների համար: 15—15 (4)

Մամուլի տակից դուրս են եկել և վաճառվում են Կենտրոնական Գրախմբատանցում հետևեալ գրքերը:

|                                                                       |   |    |    |    |
|-----------------------------------------------------------------------|---|----|----|----|
| Մանկական երգեր Գամառ-Քաթիպայի, կազմած . . . . .                       | — | ր. | 25 | կ. |
| — նոյնը անկազմ . . . . .                                              | — | »  | 15 | կ. |
| Թաւամազ մեղու պատկերազարդ, կազմած թարգ. օր ն. Տէր-                    | — | »  | 40 | կ. |
| Մարկոսեանի Կարմիր լապտեր պատկերազարդ և կազմած, թարգ. օր ն. Տէր-       | — | »  | 50 | կ. |
| Մարկոսեանի — նոյնը առանց կազմի . . . . .                              | — | »  | 30 | կ. |
| Վէպեր. Յ. Գրգորեանցի . . . . .                                        | — | »  | 60 | կ. |
| Մօրեւ կամ աշխատութիւն, հեղ. Տ. Գառն-թարգմ. Գաղիերէնից. . . . .        | 1 | —  | —  | կ. |
| Խորհրդաւոր կղզի, հեղ. Փ. Վերն 3 հ. թարգ. Գաղիերէնից . . . . .         | 4 | —  | —  | կ. |
| Դիւանայի բլուր. հեղ. Էօֆէն Սիւ 2 հ. թարգ. Գաղիերէնից . . . . .        | 2 | »  | 75 | կ. |
| Պատանկան ներշնչումներ, հեղ. Հրանտ Ասատուրի . . . . .                  | — | »  | 60 | կ. |
| Սահմանադրութիւն և հայ ժողովուրդն Հր. Ասատուր . . . . .                | — | »  | 35 | կ. |
| Մի կաթիլ արտոյր, գոր կը հեղու. Սիւանի հայ մտիւրիւն վրայ . . . . .     | — | »  | 35 | կ. |
| Խօսք գէյրեանցի հեղ. Վ. Վ. Պարտիզակցի . . . . .                        | — | »  | 70 | կ. |
| Թորոս աղբար Հայաստանի ձամբորդ հեղ. Սրուանձտեանց . . . . .             | 1 | »  | 25 | կ. |
| Մանանայ նոր հեղինակի . . . . .                                        | 1 | »  | 75 | կ. |
| Սիրաք և Սամուէլ բարի հօր կրթական դասեր, հեղ. Խրիմիան Հայրիկ . . . . . | 1 | »  | 45 | կ. |
| Մարգարիտ արքայութեան երկնից, նոյն հեղ. . . . .                        | — | »  | 75 | կ. |
| Վանքոյժ. կուժ մի ջուր իւր այրած հայրենացի վերայ կ'արկէ Խրի-           | — | »  | —  | կ. |
| ման հայրիկ . . . . .                                                  | — | »  | 20 | կ. |
| Թէ ինչ շահեցանք Բերլինի վեհաժողովէն, հեղ. Մ. Ջերազի . . . . .         | — | »  | 40 | կ. |
| Հայաստան և Բուարիայ նոյն հեղ. . . . .                                 | — | »  | 60 | կ. |
| Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դասախօսութիւն Ս. Ար-                 | — | »  | 50 | կ. |
| ժողովուրդ . . . . .                                                   | — | »  | —  | կ. |

|                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                      |   |   |    |    |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---|---|----|----|
| Հրատարակութիւն Զարմայր Մանրեանի                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                      |   |   |    |    |
| Փարոս Հայաստանի, պատկերազարդ հանդէս. . . . .                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                         | 1 | » | —  | կ. |
| Նղբայր և քոյր Գերմանական վէպ. պատկերազարդ . . . . .                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  | — | » | 30 | կ. |
| Արքայադուստր Գերմանական վէպ. պատկերազարդ . . . . .                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   | — | » | 35 | կ. |
| Հակայական ձեռքեր Անգլիական վէպ. պատկերազարդ . . . . .                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                | — | » | 10 | կ. |
| Իշխան Բէհրուժեանի Հրատարակութիւններ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  |   |   |    |    |
| Վոյքի իմ վեչեր, Փարս երեք պատկերով Մ. Տ. Գ. . . . .                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  | — | » | 40 | կ. |
| Բերբեր բիճու հանաքը. Օպերետա մի գործողութեամբ . . . . .                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              | — | » | 25 | կ. |
| Աշնայային երեկոյ զիւղում, փողովի մէկ արարուածով . . . . .                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            | — | » | 25 | կ. |
| Բռնի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով . . . . .                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 | — | » | 40 | կ. |
| Ժանօ և Ժանէտ, օպերա-փողովի, մէկ գործողութեամբ . . . . .                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              | — | » | 40 | կ. |
| Պառանքներ խրատ. փողովի մէկ արարուածով Մ. Տ. Գ. . . . .                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               | — | » | 50 | կ. |
| Տիկնիկը նրան սպասում է, կատակ երգութիւն մէկ արա-                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                     | — | » | —  | կ. |
| րուածով . . . . .                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    | — | » | 30 | կ. |
| Անանուն կատակ. կատակերգութիւն մէկ արարուածով . . . . .                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               | — | » | 40 | կ. |
| Փակուած դրան մօտ. պատկերամենախօսութիւն . . . . .                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                     | — | » | 30 | կ. |
| Պէպօ. կոմեդիա երեք արարուածով, հեղ. Գ. Սոււնդուկեանի . . . . .                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       | — | » | 30 | կ. |
| Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասազգրքեր Հայերէն, Ռուսերէն և օտար լեզուներ, դասական պետոյքներ ուսումնարանների և աշակերտների համար. Հայերէն, Ռուսերէն և Գաղիերէն վիպասնութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և զիտու-թեան գանազան ձեռնարկներ վերաբերեալ գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արա-գութեամբ: Ստարադաբարցիք իրանց պահանջները պէտք է ուղարկեն հետեւեալ հասցեով «Въ Тифлисъ. Въ Центральную книжную торговлю» | — | » | —  | կ. |

10—1

ВЪ ТИФЛИССКОМЪ ТЕАТРѢ,

въ субботу, 26-го января,

ДАНЪ БУДЕТЬ

СПЕКТАКЛЬ

ВЪ П Л Ъ З У

ГОЛОДАЮЩИХЪ

СЪ УЧАСТИЕМЪ

РУССКИХЪ, ГРУЗИНСКИХЪ, АРМЯНСКИХЪ АРТИСТОВЪ И КН. Д. Г. ЭРИСТОВА, О. В. КОЛЬЦОВОЙ, И. АДАМІАНА, Г-ЖА СИРАНУШЪ И Д. А. СЛАВЯНСКАГО СЪ КАПЕЛЛОЙ.

На мѣста въ театрѣ можно записываться съ понедѣльника, 21-го января въ конторѣ редакціи Тифлискаго Вѣстника.

3—5

Дозволено Цензурою 25 Января 1880 г. Тифлисъ.

Տպարան Ա. Ա. Միխելսոնի

Типографія А. А. Михельсона

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

1880 թ. Յունվարի 15-ից Հրատարակուի Երեւանում շաբաթ մէկ անգամ

Պ Ս Ա Կ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐՅԱԿԱՆ

Չ Ք Ո Ւ Ք Ք

Տարեկան գինն է . . . . . 4 ռուբլի:  
Կէս տարեկան . . . . . 3 ռուբլի:

Ցանկացողները կարող են ստորագրել ուղղակի խմբագրատանը, Գէորգեան և ընկեր տպարանումը: Կամ Արգար Կալամիրեանցի խանութումը: Խմբագրատունը բաց է առաւօտեան ժամի 10-ից մինչև ժամի 1-ն ճաշից յետոյ: Օտար քաղաքներից պէտքէ դիմել ուղղակի խմբագրիչ հետեւեալ հասցեով Въ г. Эривань Редактору газеты „ПСАКЪ“ Васакъ Пападжанову.

Խմբագիր-Հրատարակիչ՝ Դր. Վ. Պ ա պ ա ջ ա ն ե ա ն ց .

ՆԵՐԿԱՅ 1880 ԹԻՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ“

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ՐԱՖԳԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված էրես-ներ: Եւմեն մէկ հատորի գինն է 1 ռ. 50 կ., իսկ միասին 3 ռ.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրվել կարելի է ԳՆԴՈՒՆՆԵՐՈՒՄ այն պարոններին մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ թԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մը-ա կի» խմբագրատանը Յ. ՄԻՆԻՔ-ՅԵԿՈՒՆԵԱՆԻ:

ԾԱԽՎՈՒՄ Է

Նոր վրացական ձեռնարկ Самоучитель Учебникъ Грузинскаго языка, сост. Г-мъ Теръ-Габриелянцемъ:

Այդ ձեռնարկը պարունակում է ընդհա-նուր տեղեկութիւններ ու քերականական կա-նոններ վրաց լեզուի ամենադիւրին ոճով բա-ռերի և տառերի արտասանութիւնը գրված է ըստ մի լեզուով՝ ռուսերէն, հայերէն, Ֆրանսերէն, գերմաներէն և պարսկերէն. այն-պէս որ այդ միջոցով և օտարազգի ինքն ի-րան կարող է հեշտութեամբ ուսանել վրաց լեզուն:

Արդէն երկրորդ Հրատարակութիւնն է և յուսումը երրորդ տպագրութեամբ ի լոյս ա-ծել կարձ միջոցից յետ: Գինն է 50 կոպ. ծախվում է պ. Բերենշտամի, Զաքար Գրիգո-րեանի, Աւետիք Էնճիաճեանի մօտ ու Գաբ-րիէլ Սալամեզեանի խանութում:

Մեր աշխատութիւնը են նոյնպէս. 1) Ֆը-րանսական լեզուի ձեռնարկ, վրաց լեզուի օգնութեամբ. Livre de poche à l'usage de la jeunesse arménienne et georgienne; 2) Ինքու-սոյց ռուս լեզուի վրաց լեզուի օգնութեամբ: Самоучитель Русскаго языка при помо-щи Грузинскаго.

Գարրիէլ Տէր-Գաբրիէլեանց:

4—4

«Մշակի» առանձին համարները 5 կոպէկով հարձ ծախվում են ԹԻՖԼԻՍՈՒՄ հետեւեալ տեղերում. Վարդանախի մազազինում (Արժ-րունու տանը, Դիօրցովի փողոցի վրա, պ. Նա-զարէզովի մօտ), «Վովկաս» հիւրանոցի տակ (պ. Գէմիրեանցի ծխախոտի խանութում), Զաքարիա Գրիգորեանի գրախմբատանցում (Միխայիլեան կարմուշի մօտ) և զերձակ Դե-կարխանեանի մօտ, Բեալական զարդի զինացը:

Ակադեմիայում լաւ վիպականով ու-սումը աւարտած մի երիտասարդ հաշ-ւապահութեան և առեւտրական թուրքաւորութեան դասեր է տալիս, նոյն-պէս պատրաստում է երեխաներին ընթա-կան դպրոցներում աւանդով բոլոր ա-ռարկաներից: Պէտք է դիմել Զ ու բ ա լ օ վ ի քարվաստարան Գ է ո Ր զ ե ա ն ի գրասենյակի: 2—3 (2)

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՀԵՍՏԱԽՈՐՆԵՐԻ ԿԼՈՒԹԻ վար-չութեան խորհուրդը խնդրում է կուրբի պ.պ. անդամներին ներկայ գտնվել կուրբի ԸՆԴԱՆՈՒԹԻՎՈՒՄ, որ նշանակված է ՇԱԲԱԹ յունվարի 26-ին, երեկոյան 7 ժամին կուր-բի վերաբերեալ մի քանի ՆՇԱՆԱԽՈՐ ՀԱՐՑԵՐ քննելու համար:

3—4

ՄՕՁԴՕՔԻ

Օրիորդաց դպրոցի համար պահանջվում է մի ՎԱՐՅՈՒՆԻ շահաւոր պայմաններով. ցան-կացողները կարող են դիմել «ՄՇԱԿԻ» խմբ-ագրատունը Յ. ՄԷԼԻՔ-ՅԱԿՈՒԵԱՆԻ այլու-պայմանների մասին խօսելու համար:

Ընդունում եմ ՀԱՍՈՒԹԱԽՈՐՆԵՐ (НАХЛѢБ-НИКЪ): Պայմանների մասին կարելի է տեղե-կանալ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ-ԲԱՂՅՐԱԽԵՆԻՔԻ ՄԱԿԱԶԻՆՈՒՄ, Միխայիլեան կամուրջի վերայ:

3—5 (3)